

ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՅԱՆ

ՆՈՐ ՅԵՐԳԵՐ



12

**«ՊՐՈԼԵՏԱՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ**

6 NOV 2011

Պրոկտորները բոլոր յերկրներն, միայն

№ 12

ՊՐՈԼԵՏԱՐԻ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԶԱՆԱԶԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՐԱԴԱՐԱՆ

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ

ՆՈՐ ՅԵՐԳԵՐ

1009
39560



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՐԱԴԱՐԱՆ 1936

30 MAY 2013

Պատ. խմբ.՝ Կ. ԱԶԻՈՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ս. ԴՈՎԼԱԹՅԱՆ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԳ

Հրատարակության տալով իմ բանաստեղծությունները այս փոքրիկ ժողովածուն՝ սրանով գալիս եմ հայտնելու, Վոր այս յերկերից և վո՛չ մեկը չի մտած առանձին գրքերով լույս տեսած իմ ստեղծագործությունների մեջ։

Խնջուրույններից սակայն միայն յերկուսը լույս են տեսել ժուռնալներում — մեկը — (Ի մ գրիչը) «Հոկտեմբեր» ամսանախում, մյուսը — (Պիոները) «Կարմիր Ծիլեր»-ում։

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

1935—նոյեմբեր
Քիֆլիս

Տպ. «Զարյա Վոստոկա»-ի Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան

Պատկեր 3354. Դրսվլիս 4650. Քանակ 2000

ԻՄ ԳՐԻԶԸ

Հե՛յ, իմ թառախ անմաշ զրիչ, կռվի ծարավ,
Ապա՛ տեսնեմ յես քեզ նորից առյուծ դառած.
Ապա՛ ցույց տուր ջահելներին մեր այսորվա,
Վոր դու զիտես Գեոթեյի պես ջահել մնալ:

Քեզ ասում են, հիվանդ ե՛նա, վաղուց հոգնած,
Յեվ ուժասպառ արդեն ծերուկ մի վետերան.
Քեզ ասում են, մոռացված ե, անկյուն նետված՝
Վորպես մի հին ավետարան:

Հե՛յ, իմ Մուսա, վոր արյունդ ե վազրի արյուն,
Յեվ յեռանդդ մշտաբորբոր հնոց-ավյուն՝
Մի՛ նեղանա, վոր թշնամին քեզ ծաղրում ե,
Չե՞ վոր իմ վառ զրիչը քեզ դեռ սիրում ե...

1927 — Թիֆլիս.

Պ Ի Ո Ն Ե Ր Ը

Հայրը—բանվոր եր մի մեծ տարտելում,
Մայրը—կար անող գործարաններում.
Տանը տատի մոտ փոքրիկներ ել կան,
Մեկից սկսած մինչ վեց տարեկան:

Մի մանչ ունեյին—կարմիր պիոններ,
Նիհար ու սեվուկ, կայտառ ու ժպտուն.
Բարակ թուխ վզին ալ փողպատ ունեք,
Ամեն որ ժամի սեկին կերթար տուն:

Տուն դառնալիս չեր շտապի յերբեր,
Նա կանգ կառնեք մի քիտակի առաջ.
Ափի մեջ սեղմած մի բանի կոպեկ՝
Գրքեր կընտրեք աչքերը չռած:

Այդ կոպեկները հայրը ամեն որ
Տալիս եր նրան, վոր նախաճաշի.
Իսկ նա գրքեր եր գնում նորանոր,
Նախաճաշելը թողնում ուրիշին:

* * *

Յես ել ամեն որ ազատ ժամերին
Կերթայի քիտակ—գնել լրագիր,
Ու ամեն անգամ մեր պիոններին
Կհանդիպեյի այն հետաքրքիր:

Մի որ ել տեսա յես այն մանչուկին,
Մեկ քիտակին եր նայում վարանոտ,
Մեկ ափին սեղմած յերեք կոպեկին—
Ուզում եր գնել մի գիրք անձանոթ:

— Ինչո՞ւ ես, բա՛լաս, այդպես վարանել...
— Հրեն են գիրքը ուզում եմ գնել,
Միայն թե թանկ ե,—գինը հինգ կոպեկ,
Իսկ մոտս ունեմ յես միայն յերեք...

Հանեցի տվի պակասած վճար.
— Շնորհակալ եմ, ասաց մանչուկը,
Վաղը կըբերեմ պարտքս անպատճառ,—
Ու մտավ քիտակ, գնեց գրքույկը...

* * *

Անցան տարիներ ու մի լավ որ ել,
Յերբ մանչուկը իմ հասակ եր առել՝
Տեսա յեկել ե նա զբաղարան,
Մոտեցա ու հարց տվի յես նրան:

Դե, ասա՛ բա՛լաս, բանի՞ գիրք ունես,
Այնպես մանկական ու եժանագին.
Յերեի արդեն, վորքան զիտեմ յես,
Մեծ գրադարան ունես ահագին...

— Ունեյի գնած յերկու հարյուր գիրք,
Բայց նվիրեցի մեր կուեկտիվին.
Վողջը կարդացել, հիշում եմ անգիր,
Ասի—հիմա յեւ մեր բազան ոգտվի...

Չասե՛մ բախտավոր ու մեծ ե յերկիրն,
Ուր մանուկներն են այդպես մտածում...
Իմ ջահել գրիչ, հիմա յեւ յերգիր,
Մեր նոր սերնդի մտքի խոյացում...

1934 Վեկտ. 2.

Բ Ա Ք Ո Ւ

Ե՛խ դու Բաքու, ու Բաքվա ծով,
Ելի նորից քեզ յեկա,
Քո ջրերում ինչ վոր խոցող
Քնքույշ սիրո մրմունջ կա,

Վոր նման ե քսան տարվա
Իմ պատանյակ հասակին,
Ալեկոծվող ու խոկացող
Յերազանք ու պատրանքին:

Չեմ կարենում պարզ վորոշել,
Ի՞նչ հմայք կա քո ծոցում,
Քանի՛ գրկանք, անբուն գիշեր
Տարա քո ջեռ հնոցում,

Բայց միշտ կարոտ յես մնացի
Քո բույրերին նավթաբույր.
Թեյեվ յերկար յես սնվեցի
Նրանց թույնով անհամբույր:

Ե՛խ դու Բաքու, յեվ Բաքվի ծով,
Ելի նորից քեզ յեկա,
Քո ջրերում ինչ-վոր խոցող
Քնքույշ սիրո հմայք կա...

1930—Բաքու

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ

Վահան Տերյան, յերգդ նման թավ ջութակի—
Ջահել սրտեր շատ ես դյուլթել քո նվագով,
Վորքան ել վոր Մակինցյանը կուրծքը թակի՝
Դու կմնաս աշնան ծառի տերեվթափով:

Աչքերիդ մեջ միշտ տեսել եմ ինչ-վոր մի վախ,
Մահու ահից թե՞ սարսափից վարանելիս...
Համապ գնալուց լուռ թախծալից գլուխդ կախ՝
Կարծես շիրմիդ հետքը լինիս վորոնելիս:

Ընկեր Տերյան, ամեն աշնան, աշնան վերջին,
Յերբ ծառերն են ամենուրեք թռչնում, դեղնում՝
Բեզ հիշում եմ Պյատիգորսկում մահճիդ միջին
Ինչպես եյիր խալոտ ծայնով հեվում, դողում:

Խնչ են ուզում խիկարները մեր քեզանից,
Յեղել ես դու դողդոջ մի ցող, հոգվող բարդի,
Ու մնալով հավատարիմ ներքին ծայնիդ՝
Աչք ես փակել վոնց չորացած թուփը վարդի:

Ու ինչ եյին պնդում մեր հին խելոքները—
«Թե ապրեյիր պոետն եյիր մեծ գալիքի...»
Չե՞ վոր, Տերյան, դու ապրել ես այն որերին
Յերբ հինգ թիվը տեղի տվեց Մեծ գալիքին...

Վահան Տերյան, յերգդ նման թավ ջութակի—
Ջահել սրտեր շատ ես դյուլթել քո նվագով,
Վորքան ել վոր Մակինցյանը դուռդ թակի՝
Դու կմնաս պոետն աշնան տերեվթափի:

1933—ԲԻՖԻՒ

Ասպե
~~ԱՍՊԵՏ~~ ԱՔԻՐԸ

(Յեղեղութուն)

Յեռ հիշում եմ մեջքը գոտիկ —
Նանագուլենց Սապետ-Աբոր.
Հարեվան եր նա մեզ մոտիկ,
Մարդու անունն «Բուլղի Յագոր»:

Ասում եյին սրտով կին ե,
Ձի կնստի իգիթի պես.
Աղբատների նա հոգին ե,
Ունեցածը միշտ կանի կես:

Մի որ Յագորն թե, ա՛յ Սապետ,
Թվանգս տուր, կերթամ խրիդ.
Սապետը թե՛ ելի՞ կապեդ
Կտրվեցի՞ր... Նստի՛ր չուիդ...

Ձե՛ս տեսնում ինչ խեր ու շառ ե՛,
Գիշերները վտանգավոր.
Ժամանակը վորքան խա՛ռ ե,
Հարամեք կան հազարավոր:

Բաղմանչի յես — նայի՛ր բաղիդ,
Աջալդ ե յանի յեկե՞լ...
Քու ի՞նչ բանն ե անել խրիդ,
Են ել մենակ, առանց ընկեր:

Բայց Յագորը իր անածի,
Ձին ե թամբում ախուռատան.
Ապա նստում իր թոփալ ձին —
Միտքը ե՛նա դեպի Աղդամ:

Սրտին դիպավ Սապետ արոր,
Վոր չսեց մարդը իրեն.
— Մազս տակից կտրեմ, Յագոր,
Թե հեռանաս բաղերից դեն:

Ասաց, բահը դրեց ուսին,
Ճամպան բռնեց դեպ բաղերը.
Մինչ ամպերի տակից լուսին
Սկսեց նազով իր խաղերը:

Ասաց ու կարճ ճանապարհով
Յեկավ թագնվեց մի քերծի բով,
Տեսավ մարդուն հազար բարով,
Անցընում ե շախով-յերգով:

Սովերի տակ հենված քերծին
Դե՛մ ե արել բահի կոթը.
— Հե՛յ ով-վոր ես թո՛ղ զենքդ ու ձին,
Թե չե իջավ թվանգիս վտոր...

Բղավում ե ծայնը փոխած
Տղամարդու սպառնանքի,
Մինչ Յագորը ծիռն թողած՝
Վո՛նց ե փախչում առանց զենքի:

Մոտենում ե Սապետ-Աքիր,
Ձեռքն առնում նետած հրացան.
Ինքը նստում ձիու մեջքին
Ու տուն դառնում լուռ ու անծայն:

— Խըրի՛դ արի՞ր, հանգիստ, զվարթ
Կատակում ե Սապետ-Աքիր,
Դողդողում ես... Ի՛նչ ե, ա՛յ մարդ,
Թե մրսո՞ւմ ես, քուրքդ հագիր:

Ել մի՛ ասի, ե՛խ, Սա՛պետո,
Եդ շլուղի մասին հետո.
Թող մի առաջ ձգեմ վոտս,
Ապա արի՛, խոսի՛ր հետս:

— Ձե մի ասա... — Դե ի՛նչ ասեմ...
Տասը զաչաղ վրես թափվան,
«Տո՛ւր հրացանդ ու ձիդ ասին,
Թե չե թափվեց փորիդ թափան...»

Ասացին ու վրա տվին,
Ենքա՛ն տվին... ենքա՛ն տվին...
Աթալարի*) խոսքը վոսկի,
Մեկ-մեկ լսիր կնոջ խոսքին...

1896 - Դյանջա.

*) Հայերի:

ՔՍԱՆՎԵՑԻ ՆԱԽԱԳԱՂԸ

Ձեյինը հավատում, թե նա ել չկա—
Ձեյինը հավատում, թե նա մահացավ.
Մենք ասում եյինք, նա նորից կգա,
Մենք ասում եյինք—վտանգը անցավ:

Գուցե թշնամին բշեյ ե նրան—
Վորպես պատանդի հեռու Հնդկաստան.
Ճարտար ու ճկուն ուղեղը նրա
Գուցե զտեյ ե փախուստի ճամպա՞ն:

Ձեյինը հավատում յերկար ժամանակ,
Վոր նա ել չկա, թե նա մահացավ.
Մենք ասում եյինք—նա նորից կգա,
Մենք կարծում եյինք վտանգը անցավ:

Բայց ահա մի որ սեվ լուր բերեցին,
Թե իր բանվե՛ց ընկերների հետ
Դահիճ անգլիացիք նրան զարկեցին,
Ու գերեզմանը դարձրին անհետ... *հրեց.*

Բղավում ե ծայնը փոխած
Տղամարդու սպառնանքի,
Մինչ Յագորը ծիռն թողած՝
Վո՛նց ե փախչում առանց զենքի:

Մոտենում ե Սապետ-Աբիր,
Ձեռքն առնում նետած հրացան.
Ինքը նստում ծիռ մեջքին
Ու տուն դառնում լուռ ու անծայն:

— Խըրի՛դ արի՞ր, հանգիստ, զվարթ
Կատակում ե Սապետ-Աբիր,
Դողդողում ես... Ի՞նչ ե, ա՛յ մարդ,
Թե մրսո՞ւմ ես, քուրքդ հագիր:

Ել մի՛ ասի, ե՛լս, Սա՛պետո,
Եդ շլուղի մասին հետո.
Թող մի առաջ ձգեմ վոտս,
Ապա արի՛, խոսի՛ր հետս:

— Ձե մի ասա... — Դե ի՞նչ ասեմ...
Տասը զաչաղ վրես թափվան,
«Տո՛ւր հրացանդ ու ձիդ ասին,
Թե չե թափվեց փորիդ թափան...»

Ասացին ու վրա տվին,
Ենքա՛ն տվին... Ենքա՛ն տվին...
Աթալարի*) խոսքը վոսկի,
Մեկ-մեկ լսիր կնոջ խոսքին...

1896 - Դյանջա.

*) Հայերի:

ՔՍԱՆՎԵՑԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Ձեյինը հավատում, թե նա ել չկա—
Ձեյինը հավատում, թե նա մահացավ.
Մենք ասում եյինք, նա նորից կգա,
Մենք ասում եյինք—վտանգը անցավ:

Գուցե թշնամին բշել ե նրան—
Վորպես պատանդի հեռու Հնդկաստան.
Ճարտար ու ճկուն ուղեղը նրա
Գուցե գտել ե փախուստի ճամպա՞ն:

Ձեյինը հավատում յերկար ժամանակ,
Վոր նա ել չկա, թե նա մահացավ.
Մենք ասում եյինք—նա նորից կգա,
Մենք կարծում եյինք վտանգը անցավ:

Բայց ահա մի որ սեվ լուր բերեցին,
Թե իր բաճակե՞ց ընկերների հետ
Դահիճ անգլիացիք նրան զարկեցին,
Ու գերեզմանը դարձրին անհետ...

հրդ.

Յնգվեց մեր հոգին ցասման զայրույթով,
Ա՛խ, մեր Ստեփա՛ն,—սիմբոլ հերոսի,
Ու՛ր ես, կոչեցինք խոցոտված սրտով,
Յե՛կ մի անգամ ել՝ նայենք յերեսիդ:

Յե՛վ ահա յեկավ արյունոտ դեմքով—
Ճակատին սպիւր—կարմիր աստղի պես.
Նա յեկավ թռած անմահի թեւքով,
Խոյ անապատի հեռվից՝ մեզ ի տես:

Խոսեց մեր մտքի յե՛վ սրտերի հետ—
Թողեց իր վերջին պատգամը վսեմ.—
Կռվել հար ընդմիջտ կապիտալի դեմ՝
Ու... բռնեց հավերժ իր համպան լուռե...

1928—20 սեպտ.

ԱՅՍՊԵՍ Ե ԼԻՆՈՒՄ

Կարիքը մարդուն առյուծ ե շինում,
Ուր նա ջարդելով վանդակը իրա՝
Ահեղ մոռնչով փողոց ե յեկնում,
Խոյանում տանջող իր տիրոջ վրա—
Կործանում նրան.

Ստրկությունը—առյուծ ե ծնում—
—Այսպես ե լինում:

Զրկանքը մարդուն հերոս ե շինում—
Գետնահարկերում աշխատող խլուրդ.
Գործարաններում մեխիոններ զինում,
Ցամկոտ վրեժին իր տալու հագուրդ...
—Ու կապիտալը՝ իր գերեզմանում...
Կեղեքչի վերջը այսպես ե լինում:

Ի՛նչ ե տայֆունը չինական ծովում.
Կամ ի՛նչ սամումը անապատներում.
Հեղափոխության որենքը արդար
Խորտակելու յե ֆաշիզմը վատթար
Թող խնդան այսոր Տոկիո, Բեռլինում,
Վաղը պիտ լացեն... — Այսպես ե լինում...

1935—Թիֆլիս.



Ծ Ղ Ր Ի Դ Ը

Կիսամութին այգու միջում—
 վո՞ր խոռոչում—
 Ծղրիզն ե արծաթհնչուն
 ծիգ կարկաչում.
 Յեվ տապ որից հանգստացած,
 ու խոնջացած՝
 Խոտ ու ծաղիկ ականջ արած
 նրա կանչին՝
 Խորհրդավոր փսփսում են
 այգու միջին...

1920

ԱՐԵՎՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Զ Ը Ռ Է Ե Թ)

Արեվը կարմիր իրա զենիթից մտածեց մի որ
 Կառուցել մի նոր, հիասքանչ, սիրուն այնպիսի աշխարհ,
 Վոր մարդկությունը այսորից հետո լինի բախտավոր,
 Վոր չկրկնվեն նախկին որերի որերը վատթար:

Ու ճանաչներով նա իր հուրհրան ուզեց վորոնել
 Այնպիսի ընկեր, վոր իր պայքարում ոգնական լինեք.
 Վորոնեց յերկար... ու Աշխատանքի կանգ առավ վրան.
 — Ե՛յ կարմիր ընկեր, աշխատանք ախպեր, ասավ նա
 նրան:

Արի՛ այսորից մենք դաշն կապենք, յեղնենք մրցումի,
 Տեսնենք ո՞վ մեզնից բախտավոր կանի այսորվա
 մարդուն.

Առանց մրցումի մեր Միության մեջ մարդ չպիտ լինի,
 Մրցումը, գիտե՞ս, թե մարդու ինչպես հոգին ե գտում:

— Դեմ չեմ պայմանիդ, Արե՛վ իմաստուն, ասաց
 Աշխատանք,
 Հոժար եմ, վոր մենք նոր մարդուն մեր ջանք,
 մեր հանճարը տանք.
 Ուզում եմ բեզ հետ ահա այսորից ուժերս չափել...
 Դե՛, առաջինը դո՛ւ անցիր գործի, ա՛յ բանվոր ախպեր:

Արեվը իրա ճաճանչները սուր, սիրամարգային
Հովհարի նման փոեց ամենուր աշխարհովը մին.
Ճաճանչները այն ճեղքեցին սեվ-սեվ հողերի շերտեր,
Ու համբուրեցին նրանց բուրալից, հյութալի շուրթեր:

Հուր լեզուներով լիզեցին կուրծքը մարմաջ ծովերի,
Ցող ու հյութ տվին ցամաք ամպերին յերկնակամարի.
Հալեցին ձյուներ, վազեցին գետեր լեռնաշարքերից,
Խնդաց բնություն նրանց զրոհից, նրանց յերգերից:

Ջրերը վարար ակունքով հազար բացին ճանապարհ,
Ու վռոռեցին հացերի արտեր, բամբակի դաշտեր.
Արտերը հասան յե՛վ ուրախացան յե՛վ բռնեցին պար,
Ու որոր-շորոր քայլեցին մարշով, փոսց խրոխտ-վաշտեր:

Քայլեցին մարշով դեպի սովխոզներ, դեպի կոխոզներ—
Դեպի կալերը ու կոմբայնները գտող ու կախող.
Հակեր շարժվեցին դեպ գործարաններ... Բեռնակիր
սայեր

Դեպ շտեմարաններ— ընդարձակ ու լայն իրենց
սպասող:

Ճաճանչները այն ապա սրելով իրենց նետերը,
Մխեցին ցասկոտ գարշ ճահիճների ննխված սրտերը,
Ծծեցին թույնը, վոր ցամքի բույնը ծանծաղուտների,
Վոր պարարտանա ու բեղմնավորվի հողը տենդերի:

Անտառներ ծնան ճահիճները այն թեչի, ցիտրոնի,
Յեվ շուրջը տիրեց այնպիսի՝ թմբիր ծաղիկ-գերանի՝
Վոր հողը արբած նրանց շոյանքի անուշ բուրմունքից—
Խնդաց ու լացեց, խնդաց ու լացեց ուրախությունից:

Գանգուր թփերով կանաչ զմրուխտյա
տնկատաններում
Նարինջ-կիտրոնի ծառերը հագան վոսկյա մանյակներ.
Մանդարինների լեռներ բարձրացան Աջարիստանում—
Յեվ հեզահամբույր Աբխազիան նրա անբաժան ընկեր:

Գարշահոտության այն վայրը խոնավ վոր ջերմ ու
տենդի
Վորջն եր միայն արյունը բամոդ նորեկ սերնդի՝
Նորեկ սերնդին կարմիր արշալույս և այսոր բացում—
Հնուց մնացած ազտեղանքների մի նոր վերացում...

II

Աշխատանքն և այն... Ձեռքերը բշտած Արեվի դիմաց՝
Կանգնել և հպարտ, ժպտում և անուշ ու խոսում կամաց.
—Ա՛յ իմ մեծ ախպեր, Արեվ-արարիչ, մեղրամանիդ մեջ՝
Հարկավ, կա՛ յեվ իմ խեժից մի գդալ... Բայց թողնենք
այս վեճ...

Յեկել եմ հիմա մի՛ զեկույց տամ քեզ արածիս մասին,
Ուր չես ունեցել դու մասնակցություն ինձ հետ միասին:
Քո իմաստությամբ իմաստ ես տվել հողին ու ծովին,
Դրախտ դարձրել վայրերը տենդի-հին Կոլխիդային:

Բայց իմ որերն ել անդուլ պայքարի չե՛ն անցել
պարապ...
Յեկել եմ գործի, շաղ տվել անբավ յեռանդի տարափ.
Ավարտել եմ չես հնգամյակի վեճ պլանը սրանչ,
Նշխարհն ել զիտե, վոր չեմ ճանաչել յե՛վ վոչ մի
նահանջ:

Ճաճանչներիդ պես անցել եմ զործի տաքացած
 ու խենթ,
 Հաղթանակների, խոյանք-արշավի չտեսնված մի՞ յերթ...
 Ալքերս խարխսխ, բիբերս բորբոր—ալ արեվի դիսկ,
 Գրտինք չափելով լեռներ եմ փորել յեղունգներով իսկ։

Ու կառուցել եմ մագնիտաշենքի զիգանտ գործարան,
Դործարան չեայն, այլ հսկա քաղաք-քուրդերի շարան,
Ուր վառաններից հոսում են գետի հորդ ալիքներով
Պողպատն ու թուջը, գլանն ու ռեյսը միլիոն
տոններով:

Իգուր չեն ասել, թե գեղանուն այն Մազնիտ սարի մոտ
Այժմ դարձել է հսկա աշտարակ համաշխարհային.
Ուր զոմենները ու մարտենները նրա արևվոտ
Հեռվից յերևում հիացք են բերում փոքր Յեփրոզային:

Ուրաւ-Կուզնեցկի անա կոմբինատ, ուր այնքան առատ
Հում քարածուխից կոքսեր են բոփում փութերով
միլիարդ
Մազնիտկայի հետ ձեռք-ձեռքի տված—յերկու
յեղբայրներ--
Յերկրին տալիս են բարդ մեքենաներ, բլուամինգ,
կոմբայններ...

Իզուր չեն ասել, թե աշխատանքը դարձել է այսօր
Փառքի ու պատվի յեկ հերոսութեան հուշարձան հզոր,
Ուր դոմենները ու մարտենները ծախով դյուծական
Յեկ հռնդում են յեկ փառաբանում յերկրի ապագան:

Դեռապրո անհա... Սահանքները իր պատրաստ դավերի
Սպառնում է՝ ինն փշրել կողերը անցնող նավերի.
Բայց բազուկները իմ բանվորական յեվ հաղթ
առնական

Հարթեցին ուղին, ապահովեցին նրա ապագան:

Դեռավոր հիմա դարձել ե մի ծով—լայնածավալ գետ,
 Վոլգայի նման հոսում ե խաղաղ, խոհուն ու վետ-վետ.
 Նավեր են լողում նրա ջրերում այժմ բռնաբարձ,
 Չե՞ վոր չբացել, ծածկվել են նրա ժալռերը ցցված:

Դնկարդոգներ... զսպել եմ նրան կուռ ամբարդակով,
Վոր կամփն անցնի իրա բարձրանիստ շլուզի տակով,
Հրաշքն աշխարհի, հիացքը յերկրի դեռ հազար տարի
Հոսք ու յույս կտա... ու չի դադարի, ու չի դադարի:

Յեվ Բաղրիկ ծովի ու Բելափորի կանալը հսկա.
Մետրոպոլիտեն... Մոսկով-Վոլգայի ջրանցքը ժողկյա...
Ավատ... Տրա՛կտոր... Եհ, վորն ասեմ... չի ունենալ
վերջ,
Այս բոլորն անվերջ, թե նրանց հյուսեմ մի պոեմի մեջ...

1935—Նոյեմբեր

EXPROMTO

Պատմութեան մեջ իմ անուանը չի հիշվելու Պուշկինի պես,
Բայց առավել զերազանցող մի հատկանիշ զիմ ունեմ
յես,

Վոր ինձ կարդողն յերգերիս մեջ գտնելու յե պայքարի
հուր,

Քոցավառվի հրդեհի պես ու իր կամքը դարձնի կուռ:

Իմ յերգերը նորա հոգուն վերածնման առողջ սերմեր,
Յերը կհիշի անցած ուղին ու փառավոր անցյալը մեր.
Ազնիվ հոգին մեր անկաշառ ու թռիչքը հերոսական
Լավ որինակ կծառայի զոռ յերթի մեջ իր հաղթական:

Ամեն անգամ ինձ կարդալիս ուր թարմության կշնչի
բուլբուլ

Իմ յերկերը նրա հոգուն, նոր պայքարի կվառի հուր.
Ու նա կզգա, վոր անում ե, խոյանում ե վերելքից—
վեր...

(Փառք ու պարծանք Պուշկինին մեծ, յես շատ գոհ եմ
այս բախտից ել:

1934—*Phyllis*:

ԻՆՁ ԱՍՈՒՄ ԵՆ...

Ինձ աստում են հանգատացի՛ր,
Զե՛ փոր այն, ինչ դու յերգեցիր՝
Նա դարձավ փառք, պսակ, պարծանք,
Ռուբրիկոնն ել արդեն անցանք...

Ու ասում են յոթը տասնյակ
Տարիդ ահա արդեն անցավ.
Հա՛րկ ե այժմ ել սահնն կյանքիդ
Վերջին տարիք անհոգ, անցավ:

Հանրապետութեան Կառնի արդյոք
Հանգստանալ ծովը անհուն.
Ձի՛ ել կարող ասել վոչ-վոք,
Թե կփոխի Վոյզան իր հունն:

Սյապես յեկեղ, այսպես կերթամ,
Զրերի պես հար ու շարժուն.
Դեռ պարտք ունիմ, առաջ մի տամ—
Սպա մահու «հանգստյան տուն»...

1935—8 հունիսի,—Քիֆ, իս.

ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Տառապանքներս իզուր չեն անցել...
Ամեն մի հարվածը—շենքի մի աղյուս,
Ամեն մի դաղվածը—կերպաս նրբահյուս.
Իմ տանջանքները իզուր չեն անցել:

Հալածանքներս իզուր չեն անցել,
Յեւ ով կուզենա, վոր անմահանա՝
Թող հերոսի պես, մահից չվախենա—
Նա ով կուզենա և՛ ջահել և՛ ծեր:

Յեւ պայքարներս իզուր չեն անցել—
Հյուսել են այսոր հակառիս պսակ...
Խնդում ե այսոր իմ ծերուկ հասակ...
Ու... հասներ ծեր լույս մուրազին դուք ել:

1935—Թիֆլիս:

ՆԱՄԱԿ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՆՖԱԿԻՑ

— «Յերդվում ենք պոետ, կովել քեզ նման,
Ու լինել զավակ պատվիդ արժանի».
Այսպես գրեցին մի որ իմ անվան
Բանֆակի տղերքն Լենինականի:

Նրանք ութերորդ շրջանավարտի
Արժիկներ եյին, ջահել, սլացիկ,
Ինչպես կոկոնը կարմիր վարդենուս,
Ինչպես վաղորդյան ցողը գեղեցիկ:

Ուղարկել եյին ինձ իրենց պատկեր—
Մի նամակի հետ խանդավառ զեղուն.
Ամենքը մի տեղ փնջած մեխակներ,
Քսանութ հոգի—նորաշունչ գարուն:

Յեւ յես հիշեցի որերն իմ վոսկի,
Որերն իմ աշխույժ պատանեկական,
Յերբ յերդվել եյի անունով Մարքսի
Լինել մարտնչող հեղափոխական:

Ուրախությունից թնդաց իմ հոգին,
Յերբ սիտս բերի իմ ուխտ-յերդումը.
Յերբ մտածեցի, վոր սանիկներս
Պիտի կատարեն իրենց խոստումը...

1933—մայիսի 26.

Մ Ր Ց Ա Ն Ր Ա Վ Ե Ր

(Հակօք Հակոբյանի անվան կոլխոզի աշխատավորներին)

Կյանքումս դեռ չեմ քաշած ախ,
Յեւ յեղել եմ մարտիկ ուրախ.

Բանվորներին միշտ ասել եմ—

-- «Հե՛յ, ձեզ մատաղ, հե՛յ, ձեզ մատաղ...

Ու յեղել ե, վոր իմ ումբրից
Կտրել—դրել եմ նրանց ումբրին,
Վոր յերկաթի կյանքը նրանց,
Բոլշևիկի նման ապրին.

Ու քանի՜ ել կրել եմ յես
Վիշտ, հալածանք, քանի՜ կարիք.
Յերբե՛ք, յերբե՛ք չեմ մտածել
Թե իմ գլխին ի՞նչ կա գալիք:

Ինչ ունեցել՝ բաժանել եմ,
Ախպոր նման ընկերներին.
Ջերերս զույգ դատարկել եմ,
Ինքս հենվել իմ յերգերին:

Աշխատել եմ զոր ու գեշեր,
Նրբաններիս քանի՜ փշեր...
Ու՛մ եմ ոգնել, յե՛րբ եմ հոգնել՝
Այս մասին յես չե՛մ ել հիշել:

Ու միշտ կրկնել և ասել եմ,
Թե դեռ վոչինչ յես չեմ արել.
Ջղերս եմ նորից լարել,
Վոր չարածիս հետքից հասնեմ:

Ու մինչ նրան յես չեմ հասել՝
Ջղերս չեն հանգստացել.
Վոչ-վոր, վոչ-վոր ինձ չի՛ ասել
Թե որերս զուր են անցել:

* * *

Յես ձեր Զվագ պրոլետ-պոետ—
Մի պատվեր եմ տալիս այսօր,
Ու մի պայման կապում ձեզ հետ—
Իմ կոլխոզի շարքեր հզոր:

Վոր այսօրից ամեն մեկս,
Բռնենք ուղին հարվածայնի.
Յեն գրիչը—դուք ձեր մաշը—
Մեծ պատգամը—մեծ Լենինի:

Յեվ թող այս մի նվաճումն ել
Մեր ՅԵԿԱՏԻՆ նվեր լինի...

1930—1934

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ ՄԵԿԻՆ

(Սերգո Որջանիկիձեյին)

Մե՛ծ ե ու մե՛ծ ե քո հոգին, Սերգո,
Ցե՛վ զգայուն ու փափուկ սիրտը քո.
Ով մի հոգս ունի, իրեն ձգում ե
Քո հովանավորության ներքո:

Քո ժպիտը — արե՛վ ե ջերմացնող,
Ցե՛վ խոսքը քո թարմ — առավոտի ցող.
Ով քեզ հանդիպում՝ նա մոռանում ե
Ամեն վիշտ ու ցավ յեկող ու անցող:

Սերգո ջան, ասա՛, այդ վո՞նց ե յեղել,
Վոր բնությունը մեջդ ե գետեղել
Ցերկու մեծ աշխարհ—մե՛ծ սիրտ, մե՛ծ հոգի—
Սերգո ջան, ասա՛, այդ վո՞նց ե յեղել...

Մե՛ծ ե ու մե՛ծ ե քո հոգին, Սերգո,
Ցե՛վ լուսեղեն ու փափուկ սիրտը քո.
Ով տառապում ե, նա ել գտնում ե.
Ջերմ սիրտիանք քո հովանու ներքո:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՎԵՐԱՍՏԱՆԻՆ

(Նրա 15-ամյա ճտեղարձի առթիվ)

Ձմրան ռ'ը եր, փետրվարին...
Կոջորի մոտ սար ու ձորեր
Սաստիկ լաց ու շիվան արին՝
— Ծա՛նր որեր, ծա՛նր որեր...

Անտառներում ամպե՞րն եյին
Արդյոք այնպես անեղ հայթում,
Թե՞ բոլշևիկ ուժերն եյին
Ամեն տան մեջ կարծես պայթում...

Հազարներով զոհ են տալիս
Ռազմիկները բյուր-անբանակ,
Մենշևիկյան գվարդիան
Ցե՛վ պանծալի Կարմիր բանակ:

Ցե՛վ Ժորդանիան ինքնապատան
Խրխնջում ե վատահ արդեն՝
— «Անխոցելի յե Վրաստան—
Իսկ Թիֆլիսը յերկրորդ Վերդեն»:

Բոլշևիկի համար սակայն
Ի՞նչ կա դժվար, անհաղթելի...
Ու մի որ ել տես վո՞նց փախան
Յերկու Նոյն ու Ծերեթելին:

Լեռնանցքի մոտ Մամիսոնի
Ծուղակ ընկան խոր թիկունքով,
Այստեղ սակայն ծեր-Աղվեսը
Նորից փախավ իրա զորքով:

Ու մի հալալ խոր շունչ քաշեց
Այնուձևտեղ Թիֆլիսը մեր.
Թիֆլիսը մեր, վոր մաշել եր
Քանի՛, քանի՛ ծանր որեր...

Ազգամիջյան պատերազմներ,
Յեվ ազգատյաց թունալի մաղձ.
Մենշևիկյան հալածանքներ,
Յրտի, քաղցի խու՛ւ մղձավանջ...

Զմրան որ եր... փետրվարին...
Մամիսոնում սար ու ձորեր
Ժորդանիին դիվա՛ն արին՝
— Ուրա՛խ որեր, ուրա՛խ որեր ..

1936—Թիֆլիս.

ԿՐԵՍԼԻ ԴԱՂԼԻՃՈՒՄ

Յեվ ինչպես կանաչ—անտառի միջում
Մրրիկ ու վորոտ ծառս-ծառս լինելին՝
Այնպես ել նրանք Կարմիր դահլիճում
Դիմավորում են մեծն ՍՏԱԼԻՆԻՆ:

Հազար հրբանով, հազար գնդացի
Ցնցում են կարծես դահլիճըն անծիր,
Սալյուտ են տալիս զորավարին վես—
Նոր վերադարձած հաղթանքից կարծես:

Իսկ նա ժպտում ե, զոհ ե, աներկբա
Յերկրի այսորվա ծաղկած վիճակից.
Նախկին տազնապը այլևիս չկա—
Ապահով՝ յերկրի սահմաններն ու գիծ:

Յեվ դեմքը խրոխտ մեծն ԼՆՆԻՆԻ,
Վոր լույսերի մեջ բեմումն ե բազմած՝
Նույնպես ժպտում ե նման ՍՏԱԼԻՆԻ—
— Վեց յերդումն արդեն պատվով կատարած...

10 փետրվարի, 1936 թ.

ՔԱՌՅԱԿՆԵՐ

I

ԻՄ ՅԵՐԳԸ

Սանահնի կարծր բարից ե կռած իմ շենքը.
Ագարայի շաքարից ե ծուլած իմ յերգը.
Ով դեռ կռվել չգիտե՞ թող գա ու սովորի,
Դասակարգի պայքարից ե ծնած իմ յերգը.

II

ԱՅԴՊԵՍ ԻՄԱՑԻՐ...

Ամեն բար—բա՛ր չե, ամեն բար—բա՛ր չե,
Ամեն մի մանյակ՝ հակինթի շա՛ր չե.
Ճամպիղ տեսար ո՞՞՞ ջախջախիր անցիր,
Ոճր—չար ե, նենգ... այդպե՛ս իմացիր:

III

ԻՄԱՏՐԱՅԻ ՄՈՏ

Փոթորկի նման, վաշտերի նման,
Կարծես կռվի մեջ հաղթություն տարած,
Գալի՛ս են, գալի՛ս ալիքներն այն,
Փրփուրե դաշտում մի համատարած...

IV

ՍԽԱԼՎԵԼ ԵՍ...

Չե՛ս հասկացել «ուստա» Յեղիշ այն պոետին,
Վոր հիացած վողջունում ե ջրվեժ գետին.
Նա չե՛ր կարող կռիվ տեսնել, շա՛լ ու շառալ,
Չոգեվորվել նրա անեղ ուժի առաջ...

V

ՇԱՏԸ ԳՆԱՑԵԼ...

Ջրի հայելում պատկերս տեսա—
Ճերմակել եյի ու շատ ծերացել...
Աշնան մի ծաղիկ կողքիս փսփսաց.
— «Շատը՝ գնացել—բիչն ե մնացել...

1936—Քիֆլիս.

ՀԻՆԳ ՈՐ ՈՒ ԳԻՃԵՐ...

Յե՛վ նախքան փակեն իր դամբարանում—
Հավիտյան հեռու մարդկանց աչքերից՝
Նրա սառը դին Կալոննի զալում
Հինգ որ ու գիշեր հանգչում եր լուից:

Ընթացք եր առել հոսանքը մարդկանց—
Առջեվից քայլող ալ դրոշներով.
Յեկել են նայեն դեմքին դալկամած—
Իր կրծքին փայլող շրանշանով:

Ու քայլում եյին... Իսկ սառնամանիքն
Այնքան եր դաժան մայրաքաղաքում,
Վոր կարծես իր հետ տանում եր մասնիկն
Մարդկանց ջերմության—շնչի ու հոգու:

Հինգ որ ու գիշեր Մոսկվան չքնեց.
Չքնեց Մոսկվան մեն նրա համար,
Վոր քնած եր նա—դեկավարը մեծ,
Լուսինն ել պատվո պահակ վշտահար:

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՍՏՂ

(Յեբդ ուղղական)

Մութ ե գիշերը... Բայց չե հավիտյան
 խավարը նրա — չարությամբ հղի.
 Փայլում ե արդեն աստղը վաղորդյան
 Ու լուսավորում մեր փշոտ ուղին:

Մուրճը զավոդի, չութը գյուղական
 Վառվում են նրա փայլ հանանջներում.
 Բանվոր թե ռանչպար բարեկամական
 Կապով են կապվել ամուր շարքերում:

Նրանք հավիտյան զոդված իրար հետ —
 Դաժան վիճակի բախտի շնորհիվ
 Այիք-առ ալիք ինչպես վարար գետ —
 Խոյանում են դեպ վնասական կռիվ:

Դեպ մահու կռիվ չար թշնամու դեմ,
 Զարկի՛ր... ալիվս չկա վերադարձ.
 Թող աղջամուղջը տիրի շուրջը մեր —
 Մոտ ե արշալույս, մոտ ե անկասկած:

Մութ ե գիշերը... Բայց չե հավիտյան
 խավարը նրա — չարությամբ հղի.
 Կարմիր աստղը մեր արդեն վաղորդյան
 Մեզ ցույց ե տալիս ճշմարիտ ուղին:

ԽՐՏՎԻԼԱԿ*)

Իմ վորդին յեվ ծնող հայրը
 Պատժվեցին կենդանության դեռ ժամանակ,
 Իսկ յես հասա մինչ հետ մահվան
 Այս վիճակին նշավակի անխառնակ:

Ճցվել եմ յես այստեղ ահա
 Յերկրի համար թուջից ծուլած մի խրովիլակ,
 Անվերադարձ յեվ հավիտյան —
 Ընդմիշտ նետած ինքնակալի լուծը անարգ:

Այս եպիգրամը փորված ե Ալեքսանդր յերբորդ կայսեր ար-
 ձանի պատվանդանի վրա, վորը մինչ որս ել կանգնած ե Լենին-
 գրադի «Վոստանիա» (նախկին Զնամենսկայա) հրապարակում:
 Դանոթ. Թաբգմ.

ԿՈՄՈՒՆԻՍՏ ԵՄ ՅԵՍ

Նեա արշալույսն եմ սիրում դողդոջուն,
Յեվ յերկինքը ջինջ — կապուտավուն սաթ.
Խոխոջն առվակի արծաթահնչուն,
Անտառ ու հանդերն մեր այն հարագատ:

Ազատությունն եմ սիրում ըղծալի,
Էմբոստ փոթորկի շաչն անհանգիստ.
Որերի շունչը տարերքներով լի,
Յես կոմունիստ եմ, յես մի կոմունիստ:

Իմ աշխատավոր յեղբորն եմ սիրում,
Գործարաններում, դաշտերում գվարթ.
Սիրում եմ տեսնել նրան հանքերում,
Ճակատը պարզած ըարծր ու հպարտ:

Թող թե սեվ ե նա, շորը կարկատած՝
Պայծառ ե սակայն հոգին նրա միշտ.
Հարուստները պերճ ապրող իր ղիմաց
Թզուկներ են լոկ... Յես մի կոմունիստ:

Պարզությունն եմ յես սիրում մտքերի,
Յեվ վեր սլացող թռիչքը հոգու.
Անհունության մեջ ովկիանների
Վորոնում եմ չույս, թափ ու խորություն:

Սիրում եմ ձգտումն դեպի իդեալ,
Թող նրա ուղին տատասկոտ լինի.
Թող նա սպառնա մահով արնակալ,
Սարսափելի չե... Յես մի կոմունիստ:

Կոշտերով ծածկված ձեռքերն եմ սիրում,
Արծիվի հայացք, թուխ գույներ դեմքի.
Կանչը մետաղի, սրնգի դալալում,
Մուրն ու գութանի յերգն աշխատանքի:

Յեվ յես բանվորի քրտինքն եմ յերգում,
Ձե՞ վոր լուսատու արեվ ե նա իսկ.
Ծույլ, հարուստ մարդկանց գոյությունն
հերքում —
Յես մի կոմունիստ, յես մի կոմունիստ:

1934 թ.

*) Ֆիլիպ Շիուլեր — Գ. Նեչաևի հեռ — նախահայրերից մեկն է
առաջ պրոլետարական գրականության: Ծնվել է 1806 թվին: Բան-
վոր ե յեղել գործարանում, մեքենան կտրել է նրա աջ թևը՝ դար-
ձել ե հաշմանդամ. դրում ե ձախ ձեռքով: „Мы кузнецы“ հեղա-
փոխական յերգի հեղինակն է: Մանոթ. թարգմ.

ԹՈՌՆԻԿԻՆ

Այո, Թորնիկս, կյանքի մեր ուղին
Զի՛ փռված անվերջ ճնծաղիկներով,
Անցիր դու անվախ նրա քարուղին,
Բայց հանգիստ, զգուշ ճուշիկ բայլերով:

Բանվոր եյի յես, մարտնչող, խիզախ,
Հիմա պառաված ծիռ եմ նման,
Իզուր չե, վոր յես ծերացա շատ վաղ,
Ուղտի սապատով... իմ դեմ գերեզման:

Զե՞ վոր վառվում եր արյունը իմ մեջ
Յերազանքներին հետեւում խոհեր,
Զեյին անջատվում ինձանից հավերժ
Հավատն ու հույսը, սերը անվեհեր:

Ուզեցի մեռնել բարրիկադներում,
Վորպես անծնվեր քաջամարտ հերոս,
Սակայն ճնշեցին իմ կամքը յեռուն
Ու յես ծովափին հանգած մի փարոս:

*) Գեորգի Նեչաևը ռուս պրուետ, գրականության հիմնադիրն է, ծնվել է 1859 թվին, տպակու գործարանի բանվոր:

Աղքատությանը վաղուց եմ ճանաչ,
Զրկանքներն ինձ յերբեք չեն նեղում,
Յերբ կացին ու մուրճ ամենից առաջ
Բռնել գիտե ձեռքս կոշտերով բեղուն:

Յեվ կռվել եմ յես վորդկերանցս համար,
Գլուխս այրել հնոցների մեջ,
Վոր նրանց ուղին լինի լուսավառ,
Ինչպես իմ ուղին հրավառ անշեջ:

Նրա համար վոր տերերը կյանքի
Նայեն հոր նման իմ զավակներին.
Յեվ ոգնեն նրանց առանց արգելքի
Հասնելու պայծառ նպատակներին:

Յանկուլթյունը մեր հնչուն չեր դատարկ,
Աշխատանքը մեր չկորավ իզուր.
Լույս ազատության ճանաչներում բարկ,
Զերմություն զգաց մեր սիրտը տխուր:

Այո, դուրին չեր, վոր աջողվեց այն.
Ու մեր արյունը հոսեց գետերով.
Ու թե հասել ենք որին այսորվան՝
Այդ զնել ենք մեր սրտի հյութերով:

Յեվ ահա, բալաս, առույգ քայլվածքով,
Խանդավառ անցիր գիտության ճամպան,
Դին դիր ուրիշի քրտինքին դու ծով—
Շատերի նման չմնաս անբան:

Դռուղ, անհոգի չարամիտների
Մենք շա՛տ ենք տեսել շքանշանով.
Ու չե՛նք վախեցել նրանց դավերից,
Արհամարհել ենք արգահատանքով:

Թեկուզ հասարակ դու մի գյուղացի—
Վշտերի միջից անցնես մորմորով՝
Ցո՛ւյց տուր վոր դո՛ւ յես մեծ քաղաքացի —
Վոչ միայն ույժով, այլև վեհ հոգով:

1935

ՎԱՍԻԼԻՑ ԿԱՋԻՆ

Ռ Ա Ն Դ Ա

Շտապի՛ր, ռանդա, քստըքստա արագ,
Յերգի՛ր, շրնգշնգա դազգյահի վրա.
Քորի՛ր տախտակը պողպատովդ տաք,
Պողպատյա ու տաք սանրովդ սրած:

Ո՛յ, ո՛յ շա՛ղ յեկեք հատակով ու մին
Դուք խարտյաշ մազեր հարթ տախտակներից—
Այն մե՞ղր ե կաթել արդյոք ձեր ջանին,
Վոր այդքան բաղցր եք, այդքան բուրավից:

Հիշո՞ւմ ես, ռանդա, թե ինչպես նա մեզ
Հրաժեշտ տվավ, շտապ հեռացավ,
Այդ որից սրտիս խայթող փուշի պես
Անմոռանալի մի ցավ ավելցավ:

Ա՛խ նա հեռացավ թափահարելով
Մազերը իրա դեղձան ու փարթամ,
Ու այդ որից յես քեզ մոռանալով
Քաշքշում եյի որերս տարտամ:

Յեւ անա այսոր կրկին շրջալով
Նորից հանդիպման աղմուկի դիմաց՝
Շրջնջում ես դու անուշ բույրերով
Ու միտս բերում վարսերը սիրած:

Շտապի՛ր, ռանդա, քսքստա՛ արագ,
Շնգշնգա, յերգի՛ր դազգյահի վրա,
Բորի՛ր տախտակը պողպատովդ տաք—
Պողպատյա ու տաք սանրովդ սրած:

1935 թ.

ԴԵՍՅԱՆ ԲԵՂԵ

ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ

Բանվորական մեծ բանակին մենք փառապանծ հիմն
ենք յերգում.
Վոր կապել ե կյանքը իրա մրջյունների հետ աշխատող,
Հայտնում ենք ձեզ, բարեկամներ, բեկված, հոգնած,
սեւ քրտինքում,
Յեւ ձեզ հիվանդ ու գործազուրկ վթարվածներ միշտ
տառապող.
Վոր փչակում այս ինչ ծառի մենք բացել ենք նվերների
Մուտքը ազատ յեւ ինքնաբուխ սրտիցն յեւած
ընկերների:
Թո՛ղ կատարվի այն, ինչ վաղուց կերագեցիք դուք
անրջում—
Ձգտել լույսին, ազատության արդարությանը
հարաճուն:
Դ՛ուք, բարեկամներ, վորոշել ենք մենք
այս գարնան
Հիմնել ու շուտ լույս ընծայել մի լրագիր բանվորական:
Աստված գիտե, թե ում զլխում ծագեց այնքան
բաղդավոր միտք
Փշաթփի ծայրին ցցել բանվորական մի թռուցիկ.
Յերեթնակի, վոր անել եր արջանոցի մուտքին մոտիկ:

Մրջյունների մեջ բարձրացավ հանկարծակի աղմուկ
 ու վեճ,
 Մեկից-մյուսին մի նորություն, խոսք ու զրույց
 իրարու մեջ.
 — «Դու լսեցի՞ր լուրը, յեղբայր, այսուհետեւ մենք
 կկարդանք—
 Լրագիրը մեր սեփական, դե յեկե՛ք շատ բաժանորդ
 տանք».
 Յեւ ահա, տես, մեկը մյուսի, մի մրջյունը մյուսի
 հետքից
 Մեկիկ-մեկիկ, կամ յերկուսով, վոգեվորված այս մեծ
 դեպքից՝
 Տանում են ի՞նչ... ո՞վ մի փետուր, ո՞վ մի բմբուկ
 կամ թե մի մագ,
 Ո՞վ մի հատիկ—խնամք արած, ով մի ամբողջ ցորենի
 հասկ,
 Սահման չունի նրանց ջանքը ե՛ն խանդավառ,
 Աշխատանքն է յեռում համառ...
 Շուտով հասավ բաժանորդաց
 Թիվը հազար ու հազարանց:
 Սպասում են յե՛վ ջահելը յե՛վ ծերունին,
 Սրտատրոփ յեւ անհամբեր թերթ ունենալ մեծ հույս
 ունեն,
 Յեւ ահա բեզ Մայիս մեկին աշխարհ յեկավ նա
 վերջապես,
 Մոռացվեցան հոգսերը վողջ, ուրախացան նրանք
 այնպե՛ս,
 Վոր մոռացան աշխատելը... ով կարդալը չի
 իմանում
 Կարդացողին է նա լսում—չի կշտանում,

— «Այդպե՛ս, այդպե՛ս»...
 — «Պրավդա» յե թերթի անուն.
 — «Վոր ասել ե—ճշմարտությունն»
 — «Լիա մի տե՛ս»...
 — «Վորքան մոտ է նրա լեզուն»:
 — «Կարդա՛, ջանս, կարդա մի պարզ»...
 Յեւ լսում են սկզբից-վերջ ընթերցողին կարդալում
 վարժ.
 Մեկը—կռանչ, մյուսը—հառաչ, մեկը՝ թե «ախ»,
 մյուսը՝ թե «պահ»...
 Ինչ ուղեղով չի ըմբռնում, շոշափում է նա բնագդով.
 — «Ըհր՛... փա՛ռք բեզ, արժանացանք մրջյունի ե
 թերթն իր հոտով.
 — «Կերելի վոր այդ մերոնք են, վոր կաշխատեն»...
 — «Տերն ոգնական նրանց գործին...»
 — «Ես գործն է մեծ, հաստատ արդեն...»
 — «Հնցա կասես սրտիս միջից ե նա խոսում,
 տալիս պեծին...»
 Յեւ շարքային մրջյունները ո՞վ վոնց ուզեց—
 կարողացավ—
 Շուտ ճանաչեց թերթի ճամպան:
 Ուզարկում են իրար հետքից նյութ ու հոդված
 բազում այնքա՛ն...
 Ով զրոււմ իր հոգսի, կյանքի, ո՞վ պատմում իր
 դարդի մասին.
 Յեւ այն մասին, թե ժամ է վոր իրենք գործեն
 սերտ-միասին:
 Ու պայքարեն ընդդեմ անթիվ մրջյունակեր բզեզների:
 Ու այնպես շուտ հողվածները հասան իրենց
 նպատակին,

Վոր չանցած դեռ յերկու շաբաթ մըջանոցը ամբողջակի
Ձուլվեց մի մեծ միության մեջ,
Վոր հոգսերին իրենց տան վե՛րջ:
Մրջյունային կյանք ե ելի՛... կուրծքն ե ցափում
այնստանքից...
Իսկ այստեղ, տե՛ս... դժբաղդությո՛ւն, բույնը պղծած
ու պվերած...
Են ո՞ւմ դունչն ե արդյոք անցել այս շինարար բույնի
մոտից,
Ո՛ւմ սմբակը կործանարար, վորի՞ շունչը
թունավորված...
Մրջյուններին հիմա սակայն չարիքն այնքան չե՛ ահալի.
Թօրթը կասի ինչպես ուղղել աղետըն այս վո՛չ
ցանկալի:
Նա ցույց կտա մյուս միացած ընկերներին թե
արդյոք ո՞ւր
Ոգնությունը իրենց հղեն յեղբայրական միահամուռ:
Մինչդեռ հա՛ա գարունն անցավ, թառամում ե
շուրջը բոլոր,
Յեվ որերը թեքվում են լուռ դեպի ամառ.
Վտանգվել ե թերթը հա՛ա. թերթ կա մի որ,
Իսկ յերեք որ — վո՛չ մի համար:
Մրջյունները «ախ», «ոխ» ու «վա՛խ»
Լուր են առել թե են խարդախ
Ճանճներն են գործը պղծում,
Յեվ ո՛վ գիտե ընկերները կենդանի՞ յեն իրենց գործում.
Լուր են առել թե խռոչում նրա ամբողջ
Բույն են դրել բողոքները խմբերով վողջ.
Կոչ են անում ահազանգի,
— «Շտապեցե՛ք, հե՛յ ընկերներ, թերթին ոգնել,

Յենթարկվել ե նա վտանգի,
Դրուժյունը պետք ե փրկել:
Ձե՞ վոր պարզ ե ամենքիս ել ոգուտը մեծ նրա բերած,
Առանց թերթի ի՞նչ ե մեր կյանք մի անկենդան,
դիակ մեռած.
Պաշարները մեր խնամած վորքան վորքան ել
պակասի
Որինակ տանք ուրիշներին, հզոր ուժք թող մեր ափ,
Թե նա դադարկ չե՛ մի ստվեր—ու մենք հալալ
աշխատավոր
Նշանակենք աշխատավարձ նվեր տալու տարին մի որ.
Յեկամուտը մատուցանենք մեր նոր թերթին,
Վոր յեռանդ ու շունչ ե տալիս մեր այս յերթին:
Թող ամպերը սպառնալի կախվեն վերից,
Ձենք վախենա, չենք նահանջի մուժ ուժերից.
Դե՛, ընկերներ, կեցցե՛ վոգու արիությունը,
Աշխատավոր մեծ բանակի միությունը!
Թող մեր թերթի որն առաջին հաղթանակի
Լինի որը բանվորական ազատ մտքի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
Իմ գրելը	5
Պիոնները	6
Բաբու	9
Վահան Տերյանին	10
Սապեա Աբիրը	11
Քանվեցի նախագահը	15
Այսպես է լինում	17
Մզրիչը	18
Արեն ու աշխատանքը	19
EXPROMTO	24
Ինչ ասում են	25
Իմ ընկերներին	26
Նամակ Հենինտիանի բանֆախից	27
Մրցարարներ	28
Ժամանակի մեծ մարդկանցից մեկին	30
Խորհրդային Վրաստանին	31
Գրեմլի դաշխում	33
Քաղաքներ	34

ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերա Իսրել—Հինգ որ ու գրելը	37
Դեմյան Բեգնի—Ուղեցույց ասող	38
Դեմյան Բեգնի—Խրափելակ	39
Ֆ. Շկուլով—Կոմունիստ եմ յես	40
Գ. Նեշայեվ—Թուսիկին	42
Վասիլի Կազին—Ռանգա	45
Դեմյան Բեգնի—Մըշուսները	47

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

- ՅԵՐԵՈ 11, 4-րդ տող վերեկից տպված է—գալիքին,
պիտի լինի՝ ալիքից
- „ 12, վերնագիր — տպված է—Պապե-Աբիրը,
պիտի լինի՝ Պապե-Աբիրը
- „ 15, 3 ըդ տող ներքեկից տպված է—քսան վեց,
պիտի լինի՝ քսան հինգ
- „ 32, 5-րդ տող ներքեկից տպված է—խուլ,
պիտի լինի՝ խուլ
- „ 39, ծանոթության մեջ տպված է «Վաստանի»,
պիտի լինի՝ «Վաստանի»



ՀՀ Ազգային գրադարան



NL0343172

ԳԻՆԸ
50
ԿՈՊ.

34095



АКОП АКОПЯН
НОВЫЕ ПЕСНИ

(На армянском языке)

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТАР

891.99

2-18